«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիետա Նիկոլայի Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ ք.Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 2

2. Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում ---------- 4

3. Եզրակացություն ---------- 16

4. Գրականություն ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մաթեմատիկայի դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, զարգանան երեխաների մտածողությունը, կառուցողական ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն:

Մաթեմատիկայի դպրոցական ծրագրերը ժամանակ առ ժամանակ ենթարկվում են փոփոխությունների. որոշ թեմաներ ավելացվում են, որոշները հանվում, փոփոխվում է մատուցման լեզուն, մեթոդիկան, սակայն կա բովանդակային միջուկ, որն անփոփոխ է մնում, և որի շուրջ կառուցվում է ծրագիրը:

Շատ կարևոր է դասընթացը կազմակերպելիս հաշվի առնել յուրաքանչյուր դասարանի սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ստեղծել բարենպաստ իրավիճակային խնդիրներ սովորողների հետաքրքրությունն ու ոգևորվածությունն ապահովելու համար դեպի դասապրոցեսը:

Առարկայի դասավանդման գործընթացում կարևորվում է գործնական աշխատանքների դերը թե՛ մաթեմատիկական, և թե՛ բազմաբնույթ մտածողության զարգացման համար:Ուսուցման այս ռազմավարությունը նրանց առջև լայն հնարավություն է ստեղծում հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ներկայացնել մաթեմատիկայի դերը սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ զարգացնելու գործընթացում

և հոգեբանական մոտեցումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում:

Ուսումնասիրվող նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել սովորողների տարիքային հոգեբանական առանձնահատկությունները
- հոգեբանության և մաթեմատիկայի կապը
- մոտեցման առանձնահատկությունները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ամբողջական աշխատության ծավալը կազմում է **20** էջ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեր երկրում և հարակից տարածաշրջաններում տեղի ունեցող փոխակերպումները, եվրոպական կրթական համակարգի ներմուծումը, մասնագիտությունների մասին պատկերացումները, ընկալումները և դրանց ներկայացվող պահանջները առաջ են բերում կրթության հիմնախնդիրների վերանայման, կրթության կազմակերպման միջոցների վերափոխման անհրաժեշտություն, որոնք ուղղված կլինեն ժամանակակից մարդու զարգացմանը:

Ներկա ժամանակաշրջանում կրթությունն ընթանում է մասնագիտական պահանջարկի և աշխատաշուկայում ունեցած մրցակցության հիման վրա: Ժամանակակից մասնագետը պետք է ունենա բարձր որակի պատրաստվածություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակություններ և ստեղծարարական հմտություններ, մասնագիտական գործունեության նպատակների համար տեղեկատվական լայն հոսքում ընտրություն կատարելու և դրանք զարգացնելու կարողություններ, ինչպես նաև ինքնակատարելագործման և անընդհատ ինքնագնահատման ներուժի դրսևորումներ:

Սովորողների մասնագիտական պատրաստվածության առաջնային հիմնաքարը ինքնուրույնությունն է, հատկապես մասնագիտական կրթության և մասնագիտական որակների զարգացման հարցում: Ինքնուրույնության զարգացումն է հնարավորություն տալիս ինքնաճանաչման և ինքնագնահատման որակների ձևավորմանը, որոնք բազմակողմանի ապահովում են սովորողի անձի արդեն մասնագիտական ինքնուրույնությունը: Մասնագիտական գործունեության հոգեբանության ոլորտի գիտական աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնուրույնությունը մի կողմից հանդես է գալիս որպես անձնային որակ, մյուս կողմից՝ որպես գործունեության կամ ակտիվության տեսակ, որն ուղղված է վարքի համակարգմանը, պլանավորմանը և կառավարմանը: Այս առումով խիստ կարևորվում է հատկապես բարձրագույն կրթական համակարգում ուսանողների ինքնուրույնության ձևավորման հիմնախնդիրը և՛ որպես գործունեության ձև, և՛ որպես ակտիվ ուսանողի կերպարի ձևավորում:

Դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաներով և մեթոդաբանությամբ ապագա մասնագիտական պատրաստման նախադրյալների գնահատման համակարգում առանձնացվում են ինչպես սովորողների անհատական առանձնահատկություններն ու կարողությունները, այնպես էլ նրանց մոտիվացիոն ոլորտի ցուցանիշները: Կարևոր են նաև այն կրթական պայմանները, ծրագրերը, դասավանդման համակարգը, որոնք նպաստում են սովորողի անձի ինքնաճանաչմանը, արդյունավետ զարգացմանը և սովորողների առջև կրթական նոր պահանջների ձևավորմանը: Յուրաքանչյուր սովորող՝ հատկապես դպրոցում, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչ մասնագիտություն ընտրի: Կյանքի այդ առանձնահատուկ շրջանում մանկավարժները անքակտելի ծառայություն կմատուցեն դեռահասներին, վաղ պատանիներին, եթե օգնեն նրանց տիրապետել ինքնուրույն մտածելու և ընտրելու հմտություններին: Իսկ մաթեմատիկայի հանրակրթական իմաստն ու նշանակությունը հենց կայանում է նրանում, որ այն զարգացնում է սովորողների մտածողությունը, տրամաբանությունը, ձևավորում է մաթեմատիկական մտածելակերպ, որն էլ սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, որի արդյունքում էլ սովորողը դառնում է նաև նախաձեռնող , ինչու ոչ, հաճախ նաև ստեղծագործող…

Վստահ կարող ենք ասել, որ սովորողի անձի անհատական-տիպաբանական առանձնահատկությունների իմացությունը և դրանց հետ սովորողի ապագա մասնագիտության համապատասխանություններ գտնելու կարողությունը արդյունավետ ընթացք են տալիս ապագա մասնագիտությունը կրողի պատրաստվածությանը, մասնագիտական որակների ձևավորմանը և որ ամենակարևորն է՝ դրանց գիտակցմանը: Սովորողների շրջանում հստակ ձևավորված գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու ունակությունները իհարկե խթանում են և լավագույն հիմք են հանդիսանում ապագա մասնագիտական հասունությանն ու աճին:

Դպրոցական տարիքում կենսական մոտիվացիան բարձր է, ձգտում են հաջողությունների, ինքնուրույն են, նախաձեռնող, ակտիվ և կենսական ուժով լի, սակայն այս ներուժը համապատասխանաբար ուղղորդված չէ ուսման գործընթացին: Կրթություն ստանալու փուլում անձը դեռևս չունի ձևավորված պատկերացումներ ապագա գործունեության մասին: Դասավանդման և մանկավարժահոգեբանական աջակցության տեսանկյունից առաջնահերթ է սովորողների մոտ ձևավորել ադեկվատ ինքնագնահատում, սեփական հավակնություններն ու կարողությունները ինքնուրույն

գնահատելու ունակություն, ստեղծագործական և վերլուծական մտածողություն, որի շնորհիվ անձի մոտ կարող են ձևավորվել ոչ միայն իրատեսական պատկերացումներ ապագա կենսագործունեության վերաբերյալ: Այս մասին են փաստում նաև իրականացված տեսական և հետազոտական մի շարք վերլուծություններ: Մասնավորապես, դրանցից մի մասը փաստում են, որ սովորողների մոտ բարձր է ընդհանուր մոտիվացվածությունը, ինքնուրույնությունը, հստակ են իրենց կենսական որոշումներում, բայց մասնագիտության ընտրության հարցում թույլ են պատկերացումները սեփական գիտելիքների, ցանկությունների իրատեսական գնահատման և նախընտրելի մասնագիտությունների վերաբերյալ: Նաև, սովորողների, դիմորդների և աշխատանք փնտրող երիտասարդների մոտ հիմնականում բացակայում են մասնագիտությունների մասին ամբողջական պատկերացումները: Այս ամենը հանգեցնում է մեկ ընդհանրական գաղափարի. անհրաժեշտ է դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի շրջանակներում սովորողների մոտ բացի տվյալ առարկայի գիտելիքներից ձևավորել նաև ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական գիտելիքները գնահատելու, դրանք գործի դնելու, միջավայրի բարենպաստ և անբարենպաստ գործոնները ճանաչելու և գնահատելու կարողություններ: Խոսքը վերաբերում է այնպիսի ցուցանիշներին, ինչպիսիք են՝ ստեղծագործական ակտիվությունը, քննադատական մտածողությունը, ինքնուրույնությունը, ինքնաճանաչման հմտությունները և այլն: Դասավանդման գործընթացում սովորողին պետք է հնարավորություն տրվի հետևել սեփական ցանկություններին և հնարավորություններին, ճանաչել հետաքրքրությունների ուղղվածությունները, արժևորել դրանք տարբեր տեսանկյուններից:

Ժամանակակից մանկավարժության և հոգեբանության տեսանկյունից ամենակարևոր գործոններից մեկը ինքնուրույնությունն է: Նախկինում կատարված հետազոտությունների արդյունքներում ընդգծվում էր այն հանգամանքը, որ որքանով սովորողների մոտ արտահայտված էր ինքնուրույնության ցուցանիշը, այնքանով նրանք ավելի հստակ կողմնորոշված էին դեպի իրենց կյանքի նպատակներն ու գործունեությունը, և արդեն իսկ ունեին ձևավորված վերաբերմունք ապագայի հանդեպ: Որպես անձնային որակ, ինքնուրույնությունը վերաբերում է ինքնուրույն գործելուն, ինքնուրույն որոշումներ կայացնելուն, սեփական արարքներում ինքնուրույն պատասխանատվություն կրելուն: Այն ձևավորում է որոշակի ինքնավերաբերմունք և

ինքնահարգանք սեփական հնարավորությունների և կարողությունների հանդեպ, ինչը շատ կարևոր է ոչ միայն մասնագիտական պատրաստման գործընթացում, այլև ողջ կենսագործունեության համար: Ինքնուրույնությունը նաև նպաստում է անձի ադեկվատ ինքնագնահատմանը և մասնագիտական պատրաստման գործընթացի ճանապարհին այն խթան է հանդիսանում Ես-ի ձևավորման համար: Ես-ի ձևավորումը նպաստում է տարբեր աշխատանքային խնդիրների և հակասությունների ինքնուրույն լուծման ուղիների մշակման ու առավել ևս՝ դրանց կանխարգելման հնարավորությունների ընդլայնմանը:

Եթե հիմնարար կրթության ժամանակ անտեսվում կամ քիչ ուշադրություն է դարձրվում սովորողների վերը նշված որակներին, անձը սոցիալական միջավայրում հանդես է գալիս միայն որպես կատարող, ենթակա՝ զերծ մնալով նախաձեռնողությունից, նոր գաղափարների, ստեղծարար մոտեցումների առաջարկներից, ճկուն գործելակերպից: Կարծում ենք, որ այսօր մեր հասարակության մարտահրավերները հակադարձում են նշվածին, կանխատեսելով և կարևորելով ապագա սերնդի ինքնուրույն գործելաոճն ու ինքնահաստատումը մասնագիտական գործունեության մեջ:

Մասնագիտական պատրաստվածության համար միանշանակ առաջանային դեր ունի սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարման հմտությունների ձևավորումը: Հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ է ներկայացված Օ. Վ. Մակարովայի և Տ. Գ. Կնյազևայի հոդվածներում, որոնցից մեկում նշվում է այն պայմանները, որոնք կարող են ապահովել սովորողների մասնագիտական պատրաստվածությունը: Դրանք են՝

- ✓ ուսանողների մոտ ապահովել կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ և ունակություններ,
- ✓ ապահովել գիտելիքների անընդմեջ զարգացման հոգեբանական պատրաստվածություն,
- ✓ սովորեցնել կողմնորոշվել գիտական տեղեկատվական հոսքի մեջ,
- ✓ ստեղծել բազային հիմքեր ապագա մասնագետի աշխատաշուկայում մրցակության համար:

Մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրը կապված է սոցիալական զարգացման հետ, որտեղ առաջնային պահանջները ձևավորվում են անձի բնութագրական հատկանիշներով: Հասարակական գործունեության տարբեր ոլորտներում կարևոր է անձի գիտակցաբար ընտրություն կատարելու պատրաստվածությունը, ցանկացած իրադրությունում նախաձեռնողականություն ցուցաբերելը, առաջադրված նպատակներին հասնելու կայունությունը, դժվարությունները ակտիվորեն հաղթահարելը, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելը: Սոցիալական այս մարտահրավերները համապատասխանաբար թելադրում են անձին լինել ինքնուրույն կամ ցուցաբերել ինքնուրույնություն կենսական, հասարակական, մասնագիտական գործունեության անընդհատ փոփոխվող պայմաններում:

Մասնագիտական ինքնուրույնության՝ որպես սովորողի անձնային հոգեբանական պատրաստվածության նախապայմանի ձևավորման հիմնախնդիրն արդիական է բոլոր մասնագիտություններում: Վերջին տարիների ընթացքում, տարբեր երկրներում կատարվել են բազմաթիվ հետազոտական ուսումնասիրություններ, որոնք ուղղված են եղել մասնագիտական որակներին, որտեղ առաջնային են համարում հենց ինքնուրույնության ձևավորումը:

Ինքնուրույնության՝ որպես անձնային որակի ձևավորումը մասնագետները տեսնում են ուսումնական գործընթացում, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեջ՝ շեշտադրելով հատկապես մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ու դրանց զարգացմանն ուղղված առարկայական ծրագրերի համապատասխան մշակման անհրաժեշտությունը:

Հոգեբանական հանրագիտարանում ինքնուրույնություն եզրույթը առանձին ներկայացված չէ, այն քննարկվում է ինքնակառավարում (self control) եզրույթի ներքո և համադրվում է կամքի ազատության, պատասխանատվության և Ես-ի դերակատարումներով :

Ինքնուրույնության մեկ այլ դրսևորում է որոշման կայացումը: Որոշման կայացման գործընթացի ուսումնասիրությանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, ովքեր այն կապում են մարդու կամային գործընթացների, նպատակադրման, գիտակցված ընտրության, իրադրությունից կամ անորոշությունից ելքերի փնտրման գործընթացների հետ: Ըստ Պ. Կ. Անոխինի որոշման կայացումը հոգեկան գործընթացներից ամենաբարդն է,

քանի որ իր մեջ ներառում է անձի հուզակամային, դրդապատճառային և ինտելեկտուալ կողմերը՝ պայմանավորված անձնային առանձնահատկություններով: Մեր կողմից որոշման կայացման գործընթացը քննարկելու անհրաժեշտություն կա, քանի որ ինքնուրույնությունը հանդես է գալիս հենց որոշման կայացման առանցք: Տ. Կորնիլովան որոշման կայացման գործընթացը դիտարկում է մի նոր տեսանկյունից՝ այն կապելով մարդու ինտելեկտուալ որակների հետ: Նա առանձնացնում էր անգամ ինտելեկտուալ որոշումները, որոնց հիմքում ընկած են մարդու ռացիոնալությունն ու դրդապատճառային համակարգը:

Վերլուծելով վերը նշված մոտեցումները, տեսնում ենք, որ ինքնուրույնությունն ու սեփական կարողությունների ադեկվատ ինքնագնահատումը՝ որպես անձնային որակներ, դեռևս ձևավորվում են դպրոցական տարիներին, իսկ բուհում դրանք արդեն վերածվում են մասնագիտական ինքնուրույնության: Սրանում է կայանում հոգեբանական այն խնդիրը, որ դպրոցականները, որոնց մոտ չեն ձևավորում ինքնուրույնության բազային ընդունակություններ, նաև չեն դրսևորվում կամ թույլ են դրսևորվում նրանց մասնագիտական հետաքրքրություններն ու ուղղվածությունը: Հետագայում բարձրագույն կրթական համակարգում (առավելապես կրթության առաջին տարիներին), արդեն ուսանող կարգավիճակում ունենում են լուրջ դժվարություններ, սկսած գիտելիքների ձեռքբերման գործընթացից մինչև հոգեբանական և մասնագիտական պատրաստվածություն:
Մաթեմատիկայի դասավանդման գործընթացում սովորողի ինքնուրույնությունը կարելի է դիտել որպես ինտեգրալ հատկություն, որի շնորհիվ անձը կարողանում է ընդունել և իրացնել մտածված, հիմնարար որոշումներ, ինչպես նաև կրել դրանց համար լիիրավ պատասխանատվություն: Ինքնուրույնությունը ծագում է ճանաչողական ակտիվությունից և մտածողության ինքնուրույնությունից:

Սովորողների պատրաստվածությունը իրականացվում է նաև տեսական և գործնական նյութերի ապահովմամբ, աշակերտների անհատական պատրաստվածության, հետաքրքրությունների, ուղղվածությունների հիման վրա անհատական հանձնարարությունների կատարմամբ: Այն ձևավորում է սովորողների մասնագիտական ինքնուրույնություն և մոտիվացվածություն, ինքնուրույն աշխատանքների կատարման կարողություն, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման հմտություններ, ինքնուրույն աշխատանքների կատարման նպատակի և միջոցների հստակեցում:

Հաջորդ գործոնը, որը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում կարևորվում է որպես հիմնաքար, նախաձեռնողականությունն է: Յուրաքանչյուր աշակերտ, մտածելով իր ապագայի մասին, առաջին հերթին որոշում է, թե ինչպես պետք է կառուցի իր կյանքը, ինչ մասնագիտություն պետք է ընտրի, ինչ գործունեություն իրականացի: Անձի հոգեբանական գնահատման տեսանկյունից սովորողի կրթական նպատակների ձևավորման գործընթացի փուլային հեռանկարն իր մեջ ներառում է մոտակա իրագործելի նպատակներից մինչև ապագայի երազանքը՝ որպես գերնպատակ: Կրթության որևէ փուլի ավարտը առաջադրում է նոր ընտրություն, շարունակելիության նոր գիտակցում և նոր նպատակ, որը հետագայում ծառայելու է մասնագիտական պատրաստմանը, աշխատանքային գործունեությանը [3, էջ 389-395]: Այս ամենի հիմքում առաջատար է անձի մտածողության և երևակայության ճանաչողական գործընթացները: Հետևաբար ստեղծագործական մտածողությունը, որը ներառում է երևույթների և իրադարձությունների վերլուծություն, համադրություն, պլանավորում, նախագծում, պահանջում է առանջնային ուշադրություն առարկայական դասավանդման և կրթության կազմակերպման գործընթացում, մասնավորապես մաթեմատիկա առարկայում:

Այսօր ժամանակակից երիտասարդների համար մասնագիտության, աշխատանքի, կրթության, կարիերայի հետ կապված բազում խնդիրներ կան, որոնց արդյունավետ լուծումը պահանջում է անձնային որակների և ներուժի ճիշտ կառավարում: Այն ընդգրկում է նախաձեռնողության և ստեղծարար մտածողության ողջ շրջանակը՝ անձնային աճ, կյանքի ոճ, արժեքային համակարգ, հավակնությունների մակարդակ, գիտելիքների պաշար և այլն: Դպրոցական կրթության տարիներին որքան հստակ է նկատվում սովորողի անհատական դիմանկարը, այնքան ճանաչելի են նրա այն անհատական առանձնահատկությունները, որոնք իրենց ընդհանրության մեջ ձևավորում են նրա անձնային պաշարները: Այդ իսկ պատճառով, հատկապես, ավագ դպրոցական տարիքը վճռորոշ շրջան է ինքնորոշման և ինքնուրույն կենսագործունեության ճանապարհի նախագծման համար: Պատանեկությունից երիտասարդության անցման տարիքում ձևավորվում է աշխարհընկալումը, սոցիալական դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեքային և դրդապատճառային համակարգը: Բազմաթիվ հոգեբաններ (Ա. Ադլեր, Զ. Ֆրեյդ, Է. Էրիկսոն, Ա. Մասլոու, Ա. Բանդուրա) անդրադարձել են այս տարիքի նորագոյացությունների, հոգեբանական փոփոխությունների, անձնային հիմնախնդիրների ուսումնասիրմանը, և թերևս բոլորն էլ կարևորում են անձի կենսագործունեության մեջ

ինքնուրույնության և ստեղծագործական մտքի դերը և դրանում պատրաստված լինելը: Ա. Ադլերը նույնիսկ առանձնացնում է ստեղծագործական և սոցիալական Ես-եր դրույթները որպես հոգեկան առողջության չափանիշեր և նշում է, թե որքանով է կարևոր անձի առողջ կենսագործունեության համար ինքնիրացումը, ինքնաբավարարվածությունը և նպատակասլացությունը:

Ըստ Ի. Կոնի մասնագիտության ընտրության հարցում կարևորվում են երիտասարդների սոցիալական ինքնորոշումը՝ սեփական կարողությունների և հատկությունների, ունակությունների և գիտելիքների ինքնագանահատումը: Վերոնշյալ մտքին անմիջականորեն նպաստում է մաթեմատիկական խնդիրների ինքնուրույն վերլուծությունը, հնարավոր լուծումների հայտնաբերումը և ճիշտ բանաձևի կամ թեորեմի ընտրությամբ լուծման հանգելը:

Դասավանդման և կրթության կազմակերպման գործընթացում բազմաթիվ հետազոտողներ առանձնացնում են հետևյալ որակները որպես ժամանակակից անձի ձևավորման նախապայմաններ՝

- համապատասխան գիտելիքի տիրապետումը,
- մասնագիտական ընտրություն,
- նպատակի և դրան հասնելու միջոցների հստակությունը,
- պարտականության գիտակցումը,
- գործին ուղղված պատասխանատվության զգացումը,
- մասնագիտական գործունեության մեջ սխալի կանխատեսումը,
- անձնային և մասնագիտական որակների փոխլրացումն ու համադրումը,
- աշխատանքի արդյունքի կարևորումն ու պահանջարկը…

Այս որակների ձևավորման համար դասավանդման և կրթության կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է սովորողների մոտ ձևավորել ունակություններ և գիտելիքներ, որոնք կօգնեն՝

- որոշում կայացնել,
- նորը տեսնել, գնահատել,
- մտածողությամբ ազատ լինել,
- պահանջմունքը գիտակցել,
- պատասխանատվությունը գիտակցել և հասկանալ,

- վճռական և նպատակասլաց լինել,
- կայացման ձգտում ունենալ,
- ինքնաքննադատություն, ինքնաճանաչում և ինքնաբացահայտում կարողանալ:

Դպրոցական տարիքում առավել կարևորվում է գիտելիքը, իմացությունը, ինչը թելադրվում է մեծի կողմից, և այս առումով ինքնուրույնության խթանումը զուգահեռ դժվար է իրականացնել: Այդ իսկ պատճառով էլ, քանի որ մաթեմատիկայում չի կարելի հաջողության հասնել միայն թելադրված կանոններ սովորելով, հետևաբար մանկավարժը ուսուցման գործընթացում մեծ նշանակություն է տալիս սովորողների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորմանը: Ինքնուրույն աշխատանքն առաջնային պլան է մղում սովորողի այնպիսի կարողությունները, ինչպիսիք են ակտիվությունը, հետաքրքրությունը, ստեղծագործական ուղղվածությունը, իր առջև նպատակներ դնելու կարողությունը և սեփական գործունեության կազմակերպումը: Մանկավարժի օգնությունը կայանում է նրանում, որպեսզի սովորողն այդ հատկություններն օգտագործի իր հնարավորությունների գերագույն սահմաններում: Շատ կարևոր է, որպեսզի սովորողը հասկանա, որ իր հաջողությունները կախված են իր ինքնուրույնությունից, այլ ոչ թե ծնողների կամ ուսուցչի ջանքերից:

Երբ ճիշտ է գործում հնգանկյուն կապը՝ ծնող-ուսուցիչ-աշակերտ-դասղեկ-հոգեբան, ապա դրված հիմնախնդիրը ստանում է իր դրական ու վերջնական լուծումը: Այսինքն՝ ժամանակակից ուսուցիչն իր առջև դնում է հանձնարարությունների մի խումբ կրթական նպատակին հասնելու համար և սովորողներին պատրաստում է այնպես, որ երեխաները կարողանան կողմնորոշվել և զարգանալ այն միջավայրում, որն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների: Ուսուցման սկզբնական շրջանում, ուսուցչի առաջնային գործունեություն է համարվում սովորողներին սովորեցնել դնել նպատակներ և ինքնուրույն կազմակերպել սեփական գործողությունները դրված նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար, ինչպես նաև կարողանալ գնահատել սեփական գործողությունները: Այսինքն ուսուցչի գլխավոր հանձնարարությունը, դա ուսումնական գործընթացի բաղադրիչների ձևավորումն է՝ նախ հասկանալ առաջադրված խնդիրը, ապա կարողանալ ճիշտ վերարտադրելով համառոտագրել խնդիրը և հանգել ճիշտ լուծման եղանակին՝ ընտրելով դասին համապատասխան բանաձև կամ թեորեմ: Այսինքն

սովորողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, սեփական գործողություններն ինքնուրույն կազմակերպելու համար:

Մաթեմատիկայի դասընթացում ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով:

Սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է դառնում սովորողների մոտ զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Ինքնուրույն աշխատանքի կատարման ժամանակ սովորողները պասիվ լսողից վերածվում են ակտիվ մասնակիցների, անմիջական կատարողների, որը զարգացնում է ոչ միայն նրանց գիտելիքները, այլ նաև կարողություններն ու հմտությունները, իսկ ուսուցիչը դառնում է այդ գործընթացը խթանող, օժանդակող անձ:

Ինչպես Պ. Կլայնն է ասում. <<Ուսուցումն առավել արդյունավետ է, երբ դա ուրախություն է պատճառում>>, իսկ ինքնուրույն աշխատանքը սովորողներին իսկապես ուրախություն է պատճառում, առանձնապես խմբային եղանակով, քանի որ այդ ընթացքում նրանք իրենց որոշումներում ազատ են և ինքնուրույն:

Ուսուցման մեջ անկախությունն առանձնահատուկ նշանակություն ունի, որտեղ այն ամենավառ արտահայտությունն է գտնում սովորողների ինքնուրույն աշխատանքի գործընթացում: Սովորողների ինքնուրույն աշխատանքը մանկավարժության մեջ հասկացվում է որպես ուսուցման և ինքնակրթության մեթոդներից մեկը, որը նախապայման է հանդիսանում տարբեր մեթոդների միմյանց հետ դիդակտիկ կապի համար: Դասընթացում ձեռք բերած ինքնուրույնությունը հնարավորություն է ընձեռում կյանքում ինքնուրույն որոշումներ կայացնել՝ ընդհուպ մինչև մասնագիտության ընտրություն, տալ ինքնագնահատական, լինել նախաձեռնող և այլն:

Սովորողի ինքնուրույնությունը, դա հմտությունն է ինքն իր առջև դնել ուսումնական հանձնարարություններ և դրանք լուծել սեփական կարողություններով և

հմտություններով: Այն կապված է մարդու ինքնուրույն գործունեություն կատարելու պահանջմունքի հետ: Այսինքն առաջնային պլան մղվում երեխայի այնպիսի կարողությունները, ինչպիսիք են ակտիվությունը, հետաքրքրությունը, ստեղծագործական ուղղվածությունը, իր առջև նպատակներ դնելու կարողությունը և սեփական գործունեության կազմակերպումը: Մանկավարժի օգնությունը կայանում է նրանում, որպեսզի սովորողն այդ հատկություններն օգտագործի իր հնարավորությունների գերագույն սահմաններում: Շատ կարևոր է, որպեսզի սովորողը հասկանա, որ իր հաջողությունները կախված են իր ինքնուրույնությունից, այլ ոչ թե ծնողների կամ ուսուցչի ջանքերից:

Ժամանակակից ուսցիչն իր առջև դնում է հանձնարարությունների մի խումբ, կրթական նպատակին հասնելու համար. սովորողներին պատրաստում են այնպես, որ նրանք կարողանան կողմնորոշվել և զարգանալ այն միջավայրում, որն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների: Ուսուցչի առաջնային գործունեություն է համարվում ուսուցանվողներին սովորեցնել դնել նպատակներ և ինքնուրույն կազմակերպել սեփական գործողությունները դրված նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ինչպես նաև կարողանալ գնահատել սեփական գործողությունները: Այսինքն ուսուցչի գլխավոր հանձնարարությունը, դա ուսումնական գործընթացի բաղադրիչների ձևավորումն է, որը ենթադրում է սովորողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, սեփական գործողություններն ինքնուրույն կազմակերպելու համար:

Շատ կարևոր է ինքնուրույն աշխատանքի կատարման ժամանակ վերահսկողության դերը: Յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք անհրաժեշտ է ստուգել, վերլուծել նրա արդյունքները և եզրակացնել, թե ինչն է լավ ստացվել և ինչի վրա պետք է սևեռել ուշադրությունը: Պետք է հասկանալ սխալներ կատարելու պատճառը, և գտնել դրանք ուղղելու ամենաարդյունավետ ճանապարհները: Հենց ինքնուրույն աշխատանքն է մեզ օգնում բացահայտել սխալներ կատարելու իրական պատճառը, և, հետևաբար նաև ճիշտ կազմակերպելու սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ կապված հմտությունների զարգացման և նախկինում ունեցած գիտելիքների հետ: Ինքնուրույն աշխատանքի արդյունքները մեզ թույլ է տալիս տեսնել ուսուցանվողների առաջադիմությունը:

Հայտնի գիտնական Բ.Պ.ի սահմանման համաձայն անկախ աշխատանքը սովորողների աշխատանքն է, որն իրականացվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության, բայց

նրա հանձնարարությամբ՝ դրա համար հատուկ հատկացված ժամանակում: Միևնույն ժամանակ, սովորողները գիտակցաբար ձգտում են հասնել առաջադրանքում դրված նպատակին՝ ցույց տալով իրենց ջանքերը և այս կամ այն ձևով բացահայտելով իրենց մտավոր կամ ֆիզիկական գործողությունների արդյունքները: Յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք անհրաժեշտ է ստուգել, վերլուծել նրա արդյունքները և եզրակացնել, թե ինչն է լավ ստացվել և ինչի վրա պետք է սևեռել ուշադրությունը: Պետք է հասկանալ սխալներ կատարելու պատճառը, և գտնել դրանք ուղղելու ամենաարդյունավետ ճանապարհները: Հենց ինքնուրույն աշխատանքն է մեզ օգնում բացահայտել սխալներ կատարելու իրական պատճառը, և, հետևաբար նաև ճիշտ կազմակերպելու սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ կապված հմտությունների զարգացման և նախկինում ունեցած գիտելիքների հետ: Ինքնուրույն աշխատանքի արդյունքները մեզ թույլ է տալիս տեսնել սովորողների առաջադիմությունը:

Մաթեմատիկայում ինքնուրույն աշխատանքի առավել արդյունավետ տեսակ է համարվում ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները: Ինքնուրույն ստեղծագործական գործունեության ձևավորման համար կարևոր նախապայման է համարվում մոտիվացիան, որի հիմքում ընկած է երեխաների ուսումնաճանաչողական հետաքրքրությունը:

«Երեխաներն առանց վանդակների» գրքում նշվում է, որ այն երեխաներին, որոնց միշտ ամեն ինչ հեշտությամբ է տրվում, որոնք չունեն ցանկություն ինքնուրույն գործունեություն ծավալել, կախված են ինչ-որ մեկից, անվստահ են իրենց ուժերի վրա, անհամբեր են դեպրեսիաների ժամանակ և մեծ ջանքեր չեն գործադրում որևէ աշխատանք կատարելու ժամանակ:

Անդրադարձ կատարելով վերոնշյալ մտքին, այն է՝ «Երբ ճիշտ է գործում հնգանկյուն կապը՝ ծնող-ուսուցիչ-աշակերտ-դասղեկ-հոգեբան, ապա դրված հիմնախնդիրը ստանում է իր դրական ու վերջնական լուծումը », այստեղ ևս պետք է նշել, որ այս համագործակցության արդյունքում մեծանում է երեխայի վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, ձեռք է բերվում ինքնավստահություն, նպատակասլացություն, համբերատարություն, կայունություն և պայքարելու կարողություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատությունը՝ հարկ եմ համարում նշել, որ ուսուցումը հնարավորություն է ընձեռում իրական երևույթները և առօրյա խնդիրները մոդելավորելու միջոցով դրանց ուսումնասիրությունը փոխարկել թվերի, պատկերների և պայմանանշանների՝ ուսումնասիրելով դրանք մաթեմատիկական մեթոդներով:

Ուսումնական այս բնագավառի հիմնական նպատակն է մաթեմատիկական հասկացություններով աշխատելու, խնդիրներ լուծելու միջոցով խթանել սովորողի մտավոր ունակությունների զարգացմանը, բարձրակարգ մտածողության ձևավորմանը, սովորեցնել հստակ ձևակերպել մտքերը, կատարել գրագետ դատողություններ և արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:

Ուսումնական գործընթացում առաջադրված խնդիրների ուսուցման նպատակներն են սովորողի մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածողություն, կռահելու կարողություն, սովորեցնել ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառել տարբեր գործնական խնդիրներ լուծելիս, զարգացնել սովորողի ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը, ինքնուրույնությունը, հնարամտությունը, և իհարկե, սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման Ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը:16

Մաթեմատիկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորման գործում մեծ դեր և

նշանակություն ունեն ընտրված ուսուցման մեթոդները և հոգեբանական մոտեցումները: Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Բացի այդ, կարևորվում է հնգանկյուն կապը՝ ծնող-ուսուցիչ-աշակերտ-դասղեկ-հոգեբան, ինչի արդյունքում սովորողները կարողանում են կողմնորոշվել և զարգանալ այն միջավայրում, որն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների:

Մաթեմատիկայի դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, զարգանան վերջինների մտածողությունը, կառուցողական ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն:

Գրականություն

1. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս. Մասնագիտական ինքնորոշումը որպես անձի կայացման նախադրյալ, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: Երևան, ԵՊՀ, 2014, 420-423 էջեր
2. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ., Սարգսյան Դ. Յ., Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ
3. Պապոյան Վ.Ռ.,Գալստյան Ա.Ս., Մուրադյան Ե.Բ., ՍարգսյանԴ.Յ.,Մասնագիտականինքնորոշմաննկայացմանհոգեբանականուղղորդումըկրթականհամակարգում // նյութերիժողովածու, հեղ. // Եր., ԵՊՀհրատ., 2015, 76 էջ
4. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յ., Սովորողի առարկայական նախասիրության և մոտիվացվածության կապը մասնագիտական ինքնորոշման գործընթացում.«Արդի հոգեբանություն» գիտական հանդես, Երևան, 2019, 2(4), 389-395 էջ
5. Պապոյան Վ.Ռ., Գրին Է.Ա., Գալստյան Ա.Ս. նուրիշներ, Անձիինքնիրացմանհիմնախնդիրները: Ուսումնաօժանդակձեռնարկ / Եր.: ԵՊՀհր., 2011, 102 էջ
7. Պապոյան Վ.Ռ., Կարապետյան Մ.Ա., Մասնագիտության ընտրության գործընթացի վրա ազդող անձնային բնութագրումները և սոցիալ-հոգեբանական գործոնները «Արդի հոգեբանություն» գիտական հանդես, Երևան 2019, 2(5) 348-353էջ
8. Պետրոսյան Լ.Հ., Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները – Եր.: ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, 2016, 284էջ
9. Бороздина Л.В. Сущность самооценки и ее соотношение с Я-концепцией, Вестн. Моск. УН-ТА. Сер. 14 Психология, 2011, №1, 54-65с.
10. Голубева Я.В., Проблемные классные часы. 10-11 классы, Волгоград: Учитель,2006, 157с.
11. Григорева Н.В., Профессиональное самоопределение молодежи, Чебоксары, 2002, 573с.

12. Давиташвили Е. С., Чернявская А. П., Формирование готовности подростков к принятию решения в ситуации неопределенности, Ярославский педагогический вестник № 4–2009 (61), 26-28с.
13. Джемс У., Эриксон Э., Психология самосознания, //под. Ред. Райгородский Д. Я. Хрестоматия, Самара, БАХРАХ-М, 2007, 672с.
14. Жураковский В., Сазонова З., Чечеткина И., Ткачева Т., Крубатов С., Управление самостоятельной работы: мировой опыт// Высшее образование в России.-2003, 45-49с.
15. Зинченко В. П.,Как построить свое «Я», Под ред. - М.: Педагогика, 1991. - 136 с.
16. Макарова О. В., Князева Т. Г., Самостоятельная работа студентов как важный этап изучения учетных дисциплин, УДК: 657.3(075), Таврический державний агротехнический унивеситет, 2013, 317-327с
17. Папоян В. Р., Галстян А.С. Анализ самоопределения старшеклассников в системе непрерывного образования, Материалы IX Международной научно-практической конференции., Высшая школа: опыт, проблемы, перспективы, Москва, РУДН, 2016, 21-22 апреля, Часть I, 584-587 с.
18. Папоян В. Р., Галстян А. С., Саргсян Д. Ю., Самостоятельность старшеклассников как фактор подготовки профессионала, Сборник научных трудов, международное издание, Москва 2019, 182-187с.
19. Прыгин Г. С., Психология самостоятельности: Монография.- Ижевск, Набережные Челны: Изд-во Института управления, 2009, 408с.
20. Пряжников Н. С., Методы активизации профессионального и личностного самоопределения. Воронеж, 2002, 400с.